ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ
9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

1.Դեմը – դաշտն էր անծայր, իսկ հեռվում
Լյառն այն վսեմ, որի ճանապարհով մի օր
Բարձրացել է ինքը և սառցանիստ
Գեղեցկությամբ գերվել:

Ո՞ւմ մասին է գրել Եղիշե Չարենցը, ո՞ր ստեղծագործությունից է հատվածը:

(2)

<u>Պատասխան</u>- *Չարենցը գրել է Խաչատուր Աբովյանի մասին:*
Հատվածը «Դեպի լյառը Մասիս» պոեմից է:

2.Ավանդական զրույցը պատմում է, թե նա գիշերները լոգանք էր ընդունում Եփրատի իր լողարանում: Հայ կտրիճները նրա գեղեցկությամբ հիանալու համար լեռանլանջին կրակ էին վառում, բայց աստվածուհին նրանց սիրատարփ հայացքներից խուսափելու համար շրջապատը ծածկում էր …. (*ինչո՞վ*): Այստեղից էլ առաջացել է այդ տարածքի անունը՝ …:
Ո՞վ էր նա:
Ո՞ր տեղանվան մասին է խոսքը:

(3)

<u>Պատասխան-</u> Շրջապատը ծածկում էր ***մշուշով***:
Տարածքի անունը՝ ***Մուշ:***
Խոսքը Աստղիկ դիցուհու մասին է:

3. *Ո՞ւմ մասին է ասել Հովհ. Թումանյանը.* **«… Զգում է, որ էրվում, վերջանում է ինքը, բայց մնում է արի ու բարի, անչար ու անաչառ, վեհ ու վսեմ՝ որպես աշխարհքի ու մարդու մեծ բարեկամը… Զայրացավ, բայց երբեք չչարացավ, ցավեց, բայց երբեք չանիծեց»:**

1. Գրիգոր Նարեկացի
2. Խաչատուր Աբովյան
3. Պետրոս Դուրյան
4. Սայաթ-Նովա

(2)

Պատասխան - *4. Սայաթ-Նովա*

***4**. Հովհ. Թումանյանը մոտ մեկ տասնյակ հայրենագիտական խաղերի հեղինակ է նաև: «Հայկական հանելուկներ» խաղից փորձիր գուշակել հետևյալ հանելուկի պատասխանը.*

Էն ի՞նչն է, ինչ՝
Սպիտակ դաշտ, սև սերմը,
Ձեռով ցանեմ, աչքով հնձեմ:

(1,5)

***Պատասխան** – Թուղթ ու գիր*

***5**.Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպում ո՞վ էր հայոց թագուհին:*

1. Գոհար
2. Շահանդուխտ
3. Սահականույշ
4. Ասպրամ

(1,5)

***Պատասխան** – 3.Սահականույշ*

***6**.«Սասնա ծռեր» էպոսում հերոսներից ո՞վ և ո՞ւմ է ասում.*

Մըսրա օջախ կանգնեցուցես,
Հայու օջախ փչացուցես:

Ըստ մեջբերման՝ ինչպե՞ս կբնութագրես հերոսուհուն:

(2,5)

***Պատասխան** – Էպոսում այս խոսքերն ասում է Իսմիլ Խաթունը իր որդուն՝ Մսրա Մելիքին: Տողերից ելնելով կարելի է փաստել, որ Իսմիլ*

Խաթունը հանդես է գալիս իր ցեղի պահպանման և դրա ապագայի կերտման գաղափարի կրողը, որն իր մտքերը փոխանցում է որդուն:

7.*Բառերի այս խառնաշփոթից կազմիր Ռ. Պատկանյանի և Մ. Նալբանդյանի բանաստեղծություններից մեկական քառատող: Ո՞ր բանաստեղծություններից են դրանք:*

Քաջալեր, հարազատ, փախչում ես, այդ, ափերից, չեմ կարող, ընկեր, գալ, ցայտում են, եղբայր, աչերից, գնա, բայց , իմ, քեզ, հրպարտ, արցունք, ազգի թեև, արագ, սեգ, ինչո՞ւ, քու, աստված, սերը, քեզ, հոգին, ինչո՞ւ, գնա, հետ:

(2,5)

<u>Պատասխան</u> *– Ինչո՞ւ արցունք ցայտում են*
Քու սեգ, հրպարտ աչերից,
Ինչո՞ւ արագ փախչում ես
Այդ հարազատ ափերից:
«ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ»

Գնա՛, եղբայր, աստված քեզ հետ,
Ազգի սերը քաջալեր,
Գնա՛, թեև չեմ կարող գալ,
Բայց իմ հոգին քեզ ընկեր
«ԻՏԱԼԱՑԻ ԱՂՋԿԱ ԵՐԳԸ»

8.*Նշվածներից որո՞նք են «Սասնա ծռեր» էպոսի ասույթներից /ըստ «Սասունցի Դավիթ» համահավաք բնագրի/:*

ա/ Լավ է աչքով կույր լինել, քան մտքով
բ/ Աշխարհ գութնի մոտ կը լիանա:
գ/ Քաջերի սերունդները քաջեր են:
դ/ Առյուծն առյուծ է, եղնի էգ, թե՝ որձ:

(2,5)

<u>Պատասխան</u> *- բ/ Աշխարհ գութնի մոտ կը լիանա:*
դ/ Առյուծն առյուծ է, եղնի էգ, թե՝ որձ:

9. Միջնադարում, ու մինչ օրս, հայերն այդ գիրքը համարել են «դեղ կենաց», որի օգնությամբ ձգտել ու ձգտում են մաքրվել հոգով, ազատվել մեղքերից և հասնել կատարելության:

Ո՞ր գիրքն է դա և ի՞նչ զորություն է վերագրվում նրան:

(2,5)

<u>Պատասխան</u> *- Այդ գիրքը Գ. Նարեկացու «Մատյան ողբերգության»-ն է, որը հայտնի է նաև «Նարեկ» ժողովրդական անվանումով: Գրքին վերագրվել է բուժիչ զորություն: Ժողովուրդը հավատացել է, որ գրքի շատ հատվածներ կարդալիս կարելի է ազատվել չար ոգիներց, փարատվել բազմատիվ հիվանդություններից:*